



ԽՄԲԱՆԿԱՐ

Նոյեմբերի 24-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչական անձնակազմը և աշխատակիցները միասին լուսանկարվեցին: Ճեմարանը տարեցտարի շարունակում է խմբանկարներ ունենալու գեղեցիկ ավանդույթը, որը բացի քաղցր



հիշողություններ արթնացնելուց, ապագայում կդասվի Գևորգյան հոգևոր ճեմարանի կյանքը նկարագրող փաստաթղթերի շարքին:

ԳՐԱԲԱՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՈՐ

Նոյեմբերի 25-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը մասնակցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում կազմակերպված «Գրաբարյան օրեր» ծրագրի առաջին փուլն ամփոփող և երկրորդ փուլի



սկիզբն ազդարարող «Գրաբարի կարևորությունն այսօր և դասավանդման արդի խնդիրները դպրոցում» խորագրով քննարկմանը:

Գրաբարի վերազարթնքին նվիրված այս միջոցառումների շնորհիվ մեծ հետաքրքրություն է առաջացել գրաբարի նկատմամբ:

ՍՔ. ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 28-ի երեկոյան Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճը կրկին լի էր ուսանողներով:

ճեմարանականներ համար հատուկ միջոցառում էր կազմակերպվել նվիրված Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների տոնին:

Բանախոսությամբ հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի



և թանգարանների տնօրեն արժ. տ. Ասողիկ քին. Կարապետյանը: Տեր հայրն անդրադարձավ տոնի պատմական նշանակությանը և նշեց, որ ճեմարանականները Աստծո կանչով ընտրված են հատուկ առաքելության համար և առաքելության գիտակցումը պիտի նրանց բերի խոնարհության: «Աստված մեզ ճանաչել է. հերթը մերն է Աստծուն ճանաչելու», - եզրափակեց տ. Ասողիկը:

Գևորգյան հոգևոր ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս



բրշ. Արթուր սրկ. Վարդանյանի ղեկավարությամբ ճեմարանականները հանդես եկան տոնի խորհուրդը բացահայտող երաժշտական կատարումներով, որից հետո ցուցադրվեց փաստագրական ֆիլմ՝ «Առաքյալները»:

Միջոցառումը եզրափակվեց սուրբ Առաքյալներին ուղղված բարեխոսական աղոթքով:

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԳՐԱԲԱՐ ՈՍԿԵՂԵՆԻԿ ԼԵՆՈՒ ՀԱՅՈՑ» ՄՐՅՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 2-ին ԵՊՀ Աստվածաբանության և Հայ բանասիրության ֆակուլտետների ուսանողական գիտական

ընկերությունները հրապարակեցին «Գրաբար՝ ոսկեղենիկ լեզու Հայոց» մրցույթի արդյունքները: Գևորգյան հոգևոր ճեմարանի սաներից Դավիթ դպ. Գիշյանը գրավել էր երրորդ



մրցանակային տեղը, իսկ Իշխան դպ. Քամայանը հաղթող էր ճանաչվել «Լավագույն թարգմանություն» անվանակարգում: Շնորհավորում ենք մրցույթի բոլոր մասնակիցներին:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դեկտեմբերի 9-ին Գևորգյան հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ տեսչին կից հրատարակչական խորհրդի ամբողջական կազմով հերթական ժողովը: Հրատարակչական խորհուրդի գլխավոր գործառույթն է կազմակերպել և երաշխավորել ճեմարանի գիտական արտադրանքը:

Ժողովին հրատարակչական խորհուրդը քննարկեց մի շարք գրքերի վերահրատարակության, ուսումնասօժանդակ ձեռնարկների, գրաբարից և օտար լեզուներից կատարվող թարգմանությունների հարցերը: Քանի որ 2016թ.-ին լրանում



է առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակը, խորհրդի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովն արդեն սկսել է զբաղվել հոբելյանին նվիրված միջոցառումների մշակմամբ:



Մեր զրուցակիցն է գիտությունների թեկնածու, կրոնագետ, փիլիսոփա Պարզև Բարսեղյանը: Մեր այսօրվա զրույցի թեման է գիտության և կրոնի առնչությունը:

- Պարոն Բարսեղյան, ըստ Ձեզ՝ ինչպե՞ս է գիտնականի մեջ համադրվում աշխարհիկն ու հոգևորը:

- Ցանկացած գիտնական որոշակի աշխարհայացքի կրող է, որը կյանքի ընթացքում ձեռք է բերում ճանաչողության, գիտելիքին հասնելու աշխարհիկ սկզբունքներ, օգտագործում է աշխարհիկ մեթոդներ և վերջին հաշվով հիմնվում էմպիրիկ գիտության վրա, այն դեպքում, երբ հոգևոր գիտելիքները, հավատը՝ որպես այդպիսին, նրան տրվում են ի սկզբանե, ի ծնե և ամբողջացվում ու կատարելագործվում կրթության, դաստիարակության միջոցով: Երկուսի առկայությունը գիտնականի մոտ առաջ է բերում ճանաչողության երկու տարբեր մեթոդների համադրություն և կիրառելիություն կյանքի տարբեր ոլորտներում: Ստավորականը՝ որպես գիտնական, պիտի հենվի գիտական փաստերի վրա, փորձի եզրահանգումներ անել հիմնավորված և փաստարկված ձևով, իսկ որպես հավատացյալ՝ իր հոգևոր պահանջումները բավարարի այլ ոլորտում: Այս

առումով շատ գեղեցիկ ձևով ժամանակակից գիտնականի մեջ իրոք կարելի է համադրել աշխարհայացքային մոտեցումները մեկ ընդհանուր պատկերացումների շրջանակում:

- Իսկ ի՞նչ է տալիս այսօր կրոնը հասարակությանը:

- Ցանկացած հասարակություն առաջնորդվում է որոշակի արժեքներով, որոնք նպաստում են այդ հասարակության մեջ անհատների փոխհարաբերության կարգավորմանը, զարգացմանն ու ընդհանուր համակեցության դրսևորմանը: Այս առումով, կրոնը, որպես կանոն, հասարակական կյանքում միշտ առաջնորդող դեր է ունեցել: Այն հասարակությանը առաջին հերթին տալիս է զարգացման խթան. կրոնը շարժիչ ուժ է, որը հասարակության մեջ նորմեր, չափանիշներ, պատկերացումներ և մոտեցումներ է ձևավորում: Վերջին հաշվով կրոնը հասարակական հարաբերություններում մեծ գործառույթներ ունի, որոնք խիստ կարևորվում են, իսկ այսօր շատ դեպքերում առաջանում են կոնֆլիկտներ՝ հենց այդ գործառույթների իրականացման թերացման կամ ամբողջությամբ բացակայության պայմաններից ելնելով: Կրոնը կարող է միավորել հասարակությունը, ուղղորդել դրական, կատարյալ ու բարի քայլերի, ինչպես նաև կարող է դաստիարակել, կարգավորել և առաջնորդել հասարակությանը: Այսօր հասարակության մեջ մեծ թվով այլընտրանքային ուղիներ, ճանապարհներ ու գաղափարներ են առաջարկվում կրոնի կողքին, որոնց առջև կրոնը պետք է կարողանա իր տեղն ու դերը վերանվաճել կամ առնվազն հաստատուն պահել, որպեսզի հասարակական կյանքում մնա գերակա մակարդակի վրա:

- Խնդրում եմ ասացե՞ք՝ ի՞նչ դեր ունի կրոնը Ձեր կյանքում:

- Կրոնն առաջին հերթին աշխարհայացք է և աշխարհընկալման միջոց: Այն սկզբունքները, մոտեցումներն ու պատկերացումները, որոնք ինձ առաջնորդում են կյանքում, առաջին հերթին կրոնական են և իրենց բովանդակությամբ, և իրենց ձևով ու ծագմամբ: Այն առաջին հերթին ինձ համար բարոյական նորմերի արժեհամակարգ է, որոնց ես ձգտում եմ հետևել ամբողջ կյանքում և առաջնորդվել դրանցով: Կրոնն ինձ հնարավորություն է տալիս ընտրություն կատարել լավի և վատի, դրականի և բացասականի միջև և առաջնորդվել այնպիսի բարոյական հիմնարար արժեքներով, որոնք օգնում են ինձ գտնել իմ տեղը, դերն ու նշանակությունը հասարակական միջավայրում:

Պարբերական Ռուսլան դպիր Պողոսյանը

ԱՍԾՈՒ ՍԵՌԸ

ԺԹ դարի գերմանացի նշանավոր աստվածաբան Ադոլֆ Հաունակը, խոսելով Քրիստոնեական կրոնի իսկության մասին, ասում է. «Քրիստոնեությունն ավետիս է Աստծո հայրության և մարդկանց եղբայրության մասին»: Չնայած այն բանի, որ Քրիստոս իր խոսքերի հեղինակությամբ հաստատեց Աստծո՝ Հայր լինելու գաղափարը, բայց, այնուամենայնիվ, մինչև օրս շարունակվում են քննարկումներ գնալ այն հարցի շուրջ, թե ո՞րն է իրականում Աստծո սեռը կամ, մեկ այլ խոսքով, Աստված հայր է, թե՞ մայր: Բանն այն է, որ խնդիրը կիսատ չթողնելու համար, այս ամենին պետք է ավելացնել ևս մեկ կարևոր հարց՝ արդյո՞ք Աստված սեռ ունի: Եկեք մի պահ պատկերացնենք, որ ունի: Այդ դեպքում ի՞նչ սեռի է նա պատկանում:



Ամբողջ Հին Կտակարանը ուղղակի հեղեղված է Ռազմիկ, Թագավոր, Առաջնորդ Աստծո պատկերազրույցներով, որը բնականաբար ենթադրում է Աստծո արական սեռի պատկանելիություն, սակայն այս ամենի կողքին միաժամանակ կարելի է գտնել հատվածներ, որտեղ Աստված հանդես է գալիս որպես ծննդկան մայր (Ես. ԽԲ 14), սիրող մայր (Ես. ԿԶ 13) և այլն: Որոշ ֆեմինիստ աստվածաբաններ, հիմնվելով այս համարների վրա, հայտարարում են, որ Աստված ունի իգական սկիզբ, իսկ նրան հայրական սեռ վերագրելը զուտ հայրիշխանական միջավայրի և ժամանակաշրջանի ազդեցություն է, այսինքն՝ նրանք կարծում են, որ եթե Աստվածաշունչը գրել են տղամարդիկ, ուրեմն Աստծուն պետք է վերագրելին տղամարդկային հատկություններ:

Իրականության մեջ այս հայտարարությունն այդքան էլ հեռու չէ ճշմարտությունից, սակայն մի վերապահումով. Աստվածաշունչը գրողները ոչ թե ցանկացել են Աստծուն սեռ վերագրել, այլ նկարագրել են Աստծուն մարդկանց հասկանալի պատկերներով, իսկ իր ժողովրդի համար քինախնդիր Աստված չէր կարող պատկերվել սիրող մոր կերպարանքով, դրա համար հարկավոր էր ռազմիկ Աստված: Ամեն մի գրող, այդ թվում նաև Աստվածաշնչի հեղինակները, դատապարտված էին կրելու իրենց ժամանակաշրջանի ազդեցությունը՝ ոմանք՝ հայրիշխանական, ոմանք էլ՝ մայրիշխանական, որի հիման վրա էլ նկարագրում էին Աստծուն: Ինչ վերաբերում է որպես մայր նկարագրվելու տեսարանին, որոշ աստվածաբանների կարծիքով այդ տեսարաններն Աստվածաշնչի ամենահին նկարագրություններն են, որոնք կրում են մայրիշխանական ազդեցություններ, երբ ինչպես ընտանիքում, այնպես էլ աստվածների պանթեոնում գլխավոր աստվածը մայրն էր կամ կինը:

Հետևաբար, կարող ենք ասել, որ Աստծուն սեռ վերագրելը շատ խրթին հարց է: Իրականում Աստված սեռ չունի, նա մարդ չէ և ենթակա չէ մարդկային բնության կարգին: Իսկ ինչ վերաբերում է Աստծուն Հայր կոչելուն, ապա, ինչպես մեր խոսքի սկզբում նշել ենք, Աստծո հայրությունը հաստատված է Քրիստոսի հեղինակությամբ, որի հետ համարձակաբար կարող ենք կրկնել՝ Աբբա, Հայր:

Պարբերական Հարություն սրկ. Քեչիշյանը

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Քրիստոսի մասին առաջին կենսագրական նյութերը մենք քաղում ենք Ավետարաններից, որոնց գլխավոր նպատակը Քրիստոսի պատմական կերպարի վերհանումը չէ, այլ Հիսուսին՝ որպես Մեսիա նկարագրելը, որն, ինքնին, մի քարոզ է Քրիստոսի մասին: Սակայն այս փաստը չի հակասում այն բանին, որ Ավետարաններում առկա է նաև պատմական Քրիստոս: ԺԺ դարից սկսած շատ գիտնականներ փորձում էին վերականգնել Քրիստոսի պատմական կերպարը: Այս գործընթացի համար որպես սկզբնաղբյուր են ծառայում ոչ միայն Ավետարանները, այլ նաև Հիսուս Քրիստոսի ժամանակակից ոչ քրիստոնյա պատմիչների վկայությունները:

Այսպես, Ա դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլափոսը Քրիստոսին ներկայացնում է որպես Երուսաղեմում շրջող օրենքի ուսուցիչ: Հովսեփոսի նմանատիպ մոտեցումը Քրիստոսի անձի շուրջ բնական էր, քանի որ, լինելով հրեա և ունենալով փարիսեցիական դաստիարակություն, Քրիստոսի քարոզչության մեջ նա տեսնում էր ռաբինիստական ուսուցման գծեր: Իսկ Ա դարի հռոմեացի պատմիչ Տակիտոսը, խոսելով Հռոմում քրիստոնյաների «սանձարձակությունների», Ներոնի և քրիստոնյաների փոխադարձ ատելության մասին, Քրիստոսի մասին վկայում է, որ նա եղել է առաջին դարի հրեա գործիչ, որին հետևում էին «քրիստոնյա կոչվածները»: Քրիստոսին՝ որպես հրեա գործիչ նկարագրելը բնական էր, քանի որ Ա-Բ դարերի հռոմեացիները տարբերություն չէին դնում քրիստոնյաների և հրեաների միջև: Բ դարի սկզբի Բյուզանդիայի կուսակալ Պլինիոս Կրտսերը իր՝ Տրայանոս կայսերն ուղղված նամակում հարցնում էր, թե արդյո՞ք պետք է պատժի բոլոր քրիստոնյաներին, որոնք խոստովանում են հրեա Հիսուսին՝ Քրիստոս կոչվածին, թե՛ բացառություններ անի: Մարա բար Սերապիոն ասորի պատմիչը Քրիստոսին պատմական կերպար է ներկայացնում՝ հավասար դասելով Պյութագորասի և Սոկրատեսի հետ՝ ասելով, որ ինչպես վերոհիշյալ հեղինակները, այնպես էլ Քրիստոս հավերժ ապրում է իր աշակերտների միջոցով, որոնք պահպանում են իրենց ուսուցիչ ավանդությունը: Հրեական օրենքի մեկնության ժողովածուներում, որոնք կոչվում են Թալմուդ, Հիսուս ներկայացված է որպես հրեա ազգի թշնամի: Դա հատկապես երևում է դժոխքում Նրա չարչարանքների նկարագրությունից, որտեղ Հիսուս դասվում է Ա դավաճանների, Ա աղանդապետների և հերետիկոսների շարքը:



Բոլոր այս վկայությունները փաստում են, որ Քրիստոսի պատմական կերպարը ներկայացված է ոչ միայն Ավետարաններում, այլ նաև մի շարք պատմական սկզբնաղբյուրներում, որոնք մեծակշիռ հակափաստարկ են այն թյուր տեսությանը, թե Հիսուս Քրիստոս քրիստոնյաների կողմից ստեղծված առասպել է:

Պարրասպեց Իշխան դպիր Քամայանը

ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Ինչպես որ չկա ավելի մեծ չարիք, քան հպարտությունը, այդպես էլ չկա ավելի մեծ բարիք, քան խոնարհությունը, որովհետև առաջինն Աստծո և մարդկանց ատելի է, իսկ երկրորդը՝ սիրելի և հաճելի: Քրիստոնեության ամենից մեծ առաքինություններից



մեկը խոնարհությունն է, որովհետև այս շնորհին Աստված-մարդ փոխադարձության և մարդկային հարաբերությունների մեջ ներդաշնակության աղբյուր է:

Մարդու առաջին մեղքը՝ անհնազանդությունը, պատճառ եղավ Աստծուց բաժանվելու և Նրա շնորհից զրկվելու, և այս պարագայում խոնարհությունն առավել անհրաժեշտ է Աստծո և մարդու միջև հաշտությունը վերականգնելու համար: Խոնարհությունը ոչ թե մտքի հիմարության, այլ իմաստության, ոգու արիության և կամքի ուղիղ լինելու նշան է: Շատերս ենք փափագում մեր սրտերում, որ Տերը միշտ մեզ իր աչքի առջև ունենա՝ համաձայն իր խոսքի. «Ես ում կնայեմ, եթե ոչ հեզերին, խոնարհներին և իմ խոսքերից դողացողներին» (Ես. ԿԶ 2): Այս կյանքում շատերս ենք մութ ճանապարհներով անցնում, բայց երբ խոնարհությամբ ենք լուսավորվում, այդ նույն մութ ճանապարհները մեզ համար լուսավոր են դառնում: Եթե աստանան հպարտության, այսինքն՝ իրեն բոլորից բարձր դասելու պատճառով ընկավ երկնքից, ապա ճշմարիտ քրիստոնյան երկինք է բարձրանում խոնարհությամբ՝ սեփական անձը ոչ ոքից առավել չհամարելով: Խոնարհությունը խիստ հատկանշական է ճշմարիտ քրիստոնյայի համար, քանի որ Աստված, բոլորից բարձր լինելով, իջավ երկնքից, ընդունեց ծառայի կերպարանք և չարչարվեց իր արարածների կողմից: Նա իր իսկ օրինակով մեզ խոնարհություն սովորեցրեց՝ ասելով. «Սովորեցեք ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ» (Մտթ. ԺԱ 29):

Բոլորս էլ հանդիպել ենք պտղաբեր ծառի, որը դեպի երկինք է նայում՝ ծանրացած և կոացած վիճակով, հետևաբար, այն գլուխը, որ

խոնարհ է, լիքն է խոնարհությամբ և իմաստությամբ: Այն լուսավորելով մեր սրտերը:

Պարրասպեց Արամայիս դպիր Սողբաթյանը

«Խմեցեք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը» (Մտթ. ԻԶ 28):

Տարօրինակ է, բայց փաստ, որ շատերն այս աստվածախոս արտահայտության միայն առաջին բառն են օգտագործում իրենց կյանքում: Ինքնին, ալկոհոլն ունի բազմաթիվ բուժիչ հատկություններ, որոնք գիտեն ոչ միայն բժիշկները, այլև ողջ հասարակությունը: Չենք ուզում խոսել դրական կողմերի մասին և ոչ էլ բնավ դրա պատճառած վնասների մասին: Երկու եզրերն էլ բոլորիս լավ ծանոթ են: Այստեղ մեր խնդիրն է պարզել՝ ինչո՞ւ և ե՞րբ ենք օգտագործում ոգելից:



Հիասթափության, տխրության, հոգեպես ճնշված վիճակում օգտագործվող ալկոհոլը, հոգեբանների այնպիսի, չի լուծում առաջացած խնդիրը: Ուղղակի օգտագործողը բթացնում է իր գիտակցությունը և տվյալ պահին մոռացության մատնում այն՝ արգելափակելով խնդրի լուծմանը տանող ճանապարհները: Իսկ խնջույքների ժամանակ ալկոհոլը չի զվարթացնում ինքն իրենով, պարզապես այն միջոց է շրջապատի ձեռքին, որ ուրախացնի օգտագործողին:

Ասվածի ապացույցն այն է, եթե ձեր ծննդյան տոնին միայնակ խմիչք օգտագործեք, ապա չեք զվարթանա և չեք էլ ուրախանա: Յուրաքանչյուրի տանը ոգելից խմիչքներ կան, որոնք օգտագործվում են տարբեր առիթների համար: Եվ բազմաթիվ ազգեր ունեն խմելու մշակույթ, արվեստ, ձև: Մեր՝ հայերիս մոտ այդ լավ արտահայտված է թամադայի միջոցով: Իսկ, օրինակ, շոտլանդացիները, երբ ուզում են գրուցել ինչ-որ թեմայից, շատ մեծ բաժակի մեջ շատ քիչ վիսկի են լցնում, վրան ավելացնում մի քանի սառցեկտոր և այդպես վայելում մեկ բաժակը՝ ունենալով հաճելի գրույց: Ժողովուրդներ էլ կան, որ համեմատաբար ուշ ծանոթանալով ալկոհոլին, խմելու որոշակի մշակույթ չեն ձևավորել և երբեմն ծայրահեղությունների են հասնում ոգելիցի օգտագործումը:

Քրիստոնեական եկեղեցին դեմ չէ ալկոհոլ օգտագործելուն, այլ դեմ է հարբեցողությանը և խմիչքի չարաշահմանը: Այն փաստը, որ Հիսուս ընտրեց գինին Եկեղեցու ամենամեծ խորհուրդն իրականացնելու համար, արդեն իսկ վկայում է ոգելիցի հանդեպ Աստծո և Եկեղեցու հանդուրժողականության մասին, սակայն բազմաթիվ սուրբգրային տեղիներ հիմք են հանդիսանում Եկեղեցու խիստ դիրքորոշմանը՝ ալկոհոլի չարաշահման հարցում: Եկեղեցու պատկերացմամբ՝ մարդը միշտ սթափ պետք է լինի և գիտակցաբար կատարի ցանկացած քայլ՝ գայթակղությունները հաղթահարելու և մեղքից հեռու մնալու համար:

Պատրաստեց Ռոման ուրկ. Մարությանը

ՏՐԱՄԱՐԴ-ԿԻՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր օրերում ամենաքննարկվող թեմաներից է դարձել կնոջ և տղամարդու իրավունքների հավասարության խնդիրը: Տարբեր կառույցներ, կազմակերպություններ և կրոններ փորձում են այս հարցին անդրադառնալ տարբեր տեսանկյուններից: Իսկ թե ինչ լուծումներ է տալիս այս խնդրին քրիստոնեությունը, կարելի է ճշգրտորեն ըմբռնել ուսումնասիրելով Աստվածաշունչը՝ հիմնվելով Եկեղեցու հայրերի մեկնությունների վրա:



Ծննդոց գրքի առաջին գլուխները մեզ պատմում են արարչագործության տարբեր դրվագների, այդ թվում նաև մարդու արարման մասին: Սկզբում Աստված արարեց Ադամին, ապա նրա կողոսկրից մեկը վերցնելով՝ Եվային: «Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց և նրան բերեց Ադամի մոտ» (Ծննդ. Բ 22): Եբրայերեն «ցելա» բառը, որ նշանակում է կողոսկր, ունի նաև այլ իմաստներ և կարող է թարգմանվել «կողմ», «մաս»: Հայրերից շատերը, այս բազմիմաստությունն օգտագործելով, սուրբգրային այս հատվածը մեկնելիս շեշտում են, որ ի սկզբանե Ադամի մեջ արդեն կար նաև կանացի սկիզբը: Հովհան Ոսկեբերանը նշում է. «Ստեղծագործ Իմաստությունը բաժանեց այն, ինչն ի սկզբանե մեկ էր, որպեսզի հետագայում ամուսնության միջոցով միացնի այն, ինչը բաժանել էր»:

Եփրեմ Ասորին նույնպես անդրադառնում է Ծննդոց գրքի այս հատվածին՝ ասելով. ««Նրանց էգ և արու արարեց» խոսքերով Մովսեսը ցանկանում էր նշել, որ Եվան արդեն Ադամի մեջ էր՝ այն կողոսկրի, որից ստեղծվեց: Եվան արդեն Ադամի մեջ կար մարմնապես և հոգեպես: Եվ կողոսկրից բացի ոչինչ անհրաժեշտ չէր Եվայի արարման համար, քանի որ Ադամի կողոսկրն արդեն պարունակում էր ամենը»:

Այսպիսով, քրիստոնեությունը այնպիսի է, որ կինն ու տղամարդը մի ամբողջության երկու կեսերն են, և ոչ միայն փոխաբերական, այլ ամենաուղիղ իմաստով:

Կնոջ վերաբերյալ քրիստոնեական պատկերացում կազմելու համար բավարար է միայն նկատել, թե ինչ մեծ դեր ունի Մարիամ Աստվածածինը մարդկային փրկության համար, քանի որ հենց Սուրբ Կույսից ծնվեց մարմնացյալ Փրկիչը: Մարիամ Աստվածածինը դարձավ ոչ միայն Քրիստոսի, այլ ամբողջ Քրիստոնեական եկեղեցու մայրը: Այսպիսով, Եկեղեցին տարբերություն չի դնում տղամարդու և կնոջ միջև, քանի որ երկուսն էլ Աստծո արարածներն են, և որպես պարզև՝ երկուսն էլ հավասարապես ունեն Աստծո պատկերն ու նմանությունը:

Պատրաստեց Վլադիմիր սրկ. Գևորգյան

